

# ԳԻՒՂԱՏՏԵՍՈՒԹԵԱՆ ՈՒԽՈՒՄՆ ԵՒ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՏԵՍՈՒ

ՆՊԱՍՏ ԳԻՒՂԱՏՏԵՏԵՍԱԿԱՆ ԽՆՏԻԼԻԳԵՆՑԻԱԾԻ ԽՆԴՐԻՆ 1)

## Ա. ԱԹԱՆԱՏԵԱՆՑԻ:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻԿԱՆ ՆԱՇԱՆԳՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԿՈՎԱՏՈՒԹԱԿԱՆ ԲՈՎԱԵՐԻ ԲԱԳՄՈՆԸԹԻՒՆԸ և առնեն տեսակ զիւղամանատեսական կենդանիների գոլութիւնը բնականապէս պէտքէ առաջացնէին մեր երիդասարդութեան մէջ դրանցից աւելի խելացի և չահաւէտ կերպով օգտականու, դրանց արդիւնազործելու ձգում, մանաւանդ որ այս վերջին հանդամանքը կարող էր անականական զարգացման մի ամենահաստատապեսիր դառնալ, Այս ուրախալի ձգումը քսան աարիներից ի վեր արտակարգութել է և դրա արտակարգութիչ եղել են երիտասարդներ, որոնք իրանց միջնակարգ ուսումը աւարտելուց մատուցուածան կամ արեման ներուածան են ուղեսորել տեղական բարձրագուն դպրոցներում գիւղատնտեսական ուսում ստանալու.

Եթէ ալդպիսի անհատների թիւը մեզնում շատ չէ եղել, դրանում մեզաւոր են ուրիշ հանդամանքներ, որոնց մասին խօսելը դուքս է իմ նպատակից, սակայն չէ կարելի նաև ասել թէ դրանք հաղագիւտ երեսթներ են եղել, որովհետեւ Մովկապի Պէտրովմակի զիւղամանատեսական ճեմարանը, որպէս նաև արտասահմանեան նույնանման հաստատութիւնները, ունեցել են զիւղատնուեն հայ ուսանողների մի որոշ կոնտենդենտա.

Դրանցից շատերը, ուսման ընթացքը աւարտելուց վետու իրանց զիւղատները զործադրելու վեհենչով հալրենիք են վերադարձել, Սակայն հալրենիք դառնալուց վետու հայ զիւղատնտեսների մասին ոչնչէ լսում, իսկ եթէ լսում էլ է, մեծ մասամբ անհպասա լուրեր ասում են, որ նրանց գործերը անաջող են գնում, որ նրանք որպէս

1) Համեմատէք պ. Ա. Արասխանեանցի լոգւածի հետ «Գիւղատնտեսական ինտիլիդեցիա» խորագրով, «Մովկա» 1892 թ., № 11.

գործնական գիւղատնտեսներ շատ թով են եղել, որ իրանց հետ բերած գիտութիւնները ապարդիմ են, մնացել, որով և առաջին անաջող փորձներից լուսահատւած՝ մի երկու տարուց փառէ ձգել են գիւղատնտեսական պարապմունքները մի կողմէ, քաղաք են վերադարձել և բոլորովին ուրիշ, իրանց մասնագիտութիւնից տարբեր, գործ են ձեռնարկել:

Խճով պէտքէ բացատրել այս ինքն ըստ ինքնան ցաւալի, երեսվը, բնչու գիտնական գիւղատնտեսական կրթութիւն ունեցող հայ երիտասարդները գործնական կեանքի մէջ գրեթէ միշտ անաջողութիւնների են հանդիպում, որով և իրանց ստացած գիտութիւնը, որպէս սեփական անձի համար նոյնպէս և այն հասարակութեան համար, որին ծառակնը նրանց ոգևորութեանմի ազրիւր է եղել ապարդիմ է անցնում:

Մեր ուսումնական գիւղատնտեսների գործնական կեանքում ունեցած անաջողութիւնների պատճառները գտնելու համար բաւական է միան աշքի տակ ունենալ թէ որպիսի երիտասարդներ են մեզնում գիւղատնտեսական բարձրագուն կրթութիւն ստանում, ինչ հանգամանքներում են նրանք հարենիքում և ապա արտասահմանում ուսումն ստանում:

Միմեսնցից պէտք է զանազանել երեք կարգի երիտասարդներ:

ա. Քաղաքացի երիտասարդներ, որոնք իրանց կեանքում երբէք գիւղատնտեսութեամբ անձամբ չեն պարապել և չեն հետաքրքրել, շատ միջնակարգ ուսման ընթացքու ունեցած ամառաւակ արձակուրդներին գիւղ են ընկած, ուր նրանք վայր ի վերու գիտել են երկրագործական ամառային աշխատանքները:

բ. Կալւածատէրդի որդիք, որոնք դարձեալ 9 ամիս շարունակ քաղաքումն են ազրել իրանց ուսման պատճառով, իսկ գիւղում, իրեն աղաներ կամ աղաների որդիք, իրանց հեռու են պահել երկրագործական աշխատութիւններից, Սրանց գիտութիւնը առաջիններից եթէ պակաս չէ շատ էլ չէ. և վերջապէս՝

գ. Ամենահաղագիւս դէպքերում երիտասարդներ՝ գիւղական դասակարգից, որոնք 9-10 տարեկան հասակից խլում են հալբեճի գիւղական լընտանիքներից և ուսում առնելու նպատակով քաղաք գալով՝ քնքանում են և գիւղատնտեսական աշխատանքների համար անօրնունակ դասում են և ապա վերջինները մինչև անդամ մի տեսակ տրհամարհանքով են նաև իրանց ծնողների պարապմունքների վրայ, որով և հապենի շրջանից լուր գալիս՝ գրքերով և զրուանքներով են զբաղւում ամառնուին արձագուրդների ժամանակ:

Այս երեք կատեգորիաներից որն էլ որ վերցնելու վիճակը, կը տեսնենք, որ նրանք տեղական գործնական գիւղատնտեսներից շատ պակաս, եթէ չասեմ ոչինչ, նախապատրաստութիւններ ունին, առա աղդակիսիններն էլ միջնակարգ ուսումը աւարտելուց կամ կիսատ թողնելուց փառ, ոմանք

ողնորութիւնից, ոմանք անտեսական կարիքից ստիպւած և ոմանք էլ ուրիշ մասնագիտութեանց համար պահանջնելիք կրթութեան պակասութիւնից գիւղատնտեսական ուսման են դիմում Ռուսաստանի կամ արտասահմանի բարձրագոյն դպրոցները, ուր ոչ միայն գիտութիւնը բոլորին տարրեր հիմունքների վրաէ է դրած, այլ և հասարակական միւս պալմանները զլսովին ուրիշ են, ուրեմն և անձանոթ են միր հակ գիւղատեսու ուսանողին,

Ալժմ տեսնենք թէ գերմանացի ուսանողը մինչև գիւղատնտեսական բարձրագոյն դպրոց մտնելը կամ այդ ուսման ընթացքն աւարտելը ինչ տեսական և գործնական նախապատրաստութիւններ ունի:

Նոսի մենք տանք մեզ նոյն հարցը, ինչ որ մեր երիտասարդների մասին տեսցինք, ալսինքն որպիսի երիտասարդներ են Աւրոպական զիւղատնտեսական բարձրագոյն կրթութիւն սուանում:

Ակստեղ ևս երեք տեսակ կրթութեան և դասակարգի անձեր պէաք է միմեանցից տարբերել:

ա. Միջնակարգ կալուածառէրերի որդիքը, (գիւղական դասակարգից) որոնք գիւղատնտեսական միջնակարգ դպրոցի (Landwirtschaftsschule) 3-4-ամնաց զաւընթացքը աւարտելուց իւսուց ուղղակի մոնում են բարձրագոյն դպրոց ընդարձակելու համար իրանց մասնագիտութեան տեսական կրթութիւն գիւղատնտեսական ուսումնարաններում, Նրանք անցել են մասնագիտութեան աճնարածեց առարկաներից հետեւալները՝ բնական գիտութիւններից՝ Փիզիկա, հանքագիտութիւն, կենսանարանութիւն, բուսաբանութիւն, գիւղատնտեսական առարկաներից՝ ուսումնամասնագանական արդիւնագործութեան, բուսական արդիւնագործութեան և ուսումնա գիւղատնտեսական արդիւնատնտեսութեան (Betriebsslehre). Ակսպիսի միջնակարգ ուսումնարաններում, չնորդիւ ընտրովի ուսուցչական ոժերի և զառատութեան ձենքի՝ աշակերտների ստացած դիտելիքները հիմնաւոր են դորձնական:

բ. Երիտասարդներ, որոնք, գիւղատնտեսական միջնակարգ ուսումնա աւարտեց իւսուց, 2-3 տարով մտնում են մի հարստա կալւածառիրոջ մօտ որպէս կառավարիչներ, վերակացուներ և կամաւորներ, Նրանք ալսուեց միջոց են անհենում հիմնաւորապէս ծանօթանալու տնտեսութեան հետ, նրա զարգանքների և կառավարչութեան հետ և ապա բարձրագոյն դպրոց մտնում միանի քանի սկսմատրներով (վեցամսեակ) <sup>1)</sup> մինչև անզամ մի ուժնատրով, ուր լսում են միայն այն առարկաները, որոնց գիտենալը գործ.

<sup>1)</sup> Ուսումնական արդին, Դներմանիակի բարձրագոյն դպրոցներում, որպէս համալսարան և ալյն, բաժանում է երկու կիսամետակների կամ երկու սկսմատրների՝ ձենքուալ և ամառուակ սկսմատրներ:

Նականի մէջ ամենից անհրաժեշտ են համարում. ալղպիսիները վետոյ ստանում են լաւ ոռոգիկներ մեծ կալւածատիրոջ մօտ, այս անգամ անպատճառ որպէս կալւածի ընդհանուր կառավարիչ կամ վերատեսուչ:

Գ. Հարուստ ասպետական կալւածատէրերի (Rittergutsbesitzer) բարձըր աղնաւականների և դիտնականների որդիք, որոնք իրանց միջնակարգ կրթութիւնը զիմնապլաններում կամ բէալական դպրոցներում աւարտելուց վետոյ համալսարան են մտնում առանց նախապէս գիւղատնեսութեամբ պարապած լինելու Ալղպիսիները երկու նյատակ ունին աչքի առաջ, ա) իրանց կալւածների կառավարչութեան համար անհրաժշտ գիւղատնտեսական կրթութիւն ստանալ և բ) միջնակարգ զիւղատնեսական ուսումնարանների դասառուների կամ շրջող ուսուցիչներ (Wanderlehrer) պատրաստել, և կամ զիւղատնտեսութեամբ որպէս սոսկ զիտութեամբ պարապել, Դրանցից զուրս են դալիս պրիւատ դոցէնտներ<sup>1)</sup>, պրոֆեսորներ և կամ մամնաւոր զիտնականներ. մրանք 2-3 սեմեստր համալսարան լանգիսելուց վետոյ, մի քանի տարով համալսարանների հետ միացած փորձնական դաշտերում, տնտեսութեան մէջ կամ փորձնական իշխաններում (Versuchsstation) պարապում են և զիտական փորձեր անում և ապ անորից համալսարան դալով, շարունակում են ընդհատած ուսումը:

Խնչպէս տեսանք, զերմանացի զիւղատնտես ուսանողը մի որոշ տեսական և զործնական նախառատրաստութեամբ է բարձրագովն դպրոց մտնում կամ եթէ նա գործնական ապէս միջնչեն համալսարան մտնելը չէ պարապել, նա ալդ անում է բարձրագովն կրթութիւն ստանալու ընթացքում, որով ամբողջացնում է զիւղատնտեսութեան անհրաժեշտ ուսման և զիտութեան պակասը. Ուրիշ խօսքով, եւրոպակի զիւղատնտես ուսանողը միջնչեն կեանք մտնելը բոլորովին ուրիշ կրթութիւն և գործնական հըմտութիւններ է ձեռք բերում քան հակ ուսանողը, որին պակասում են նախ՝ միջնակարգ ուսման զիտակցական և հիմնաւոր զիտութիւնը և ապա գործնական փորձառութիւնը և իւր ապագակ մասնագիտութեան մագատականի մտապատկերները. Գիւղատնտեսութեան մէջ ալղպիսի միսին պատրաստի մտապատկերները. Գիւղատնտեսութեան մէջ ալղպիսի մի խորթ երիտասարդ բարձրագովն զիւղատնտեսական դպրոցում պարզ է որ անկարող է 2-3 տարակ ընթացքում անցնել այն բոլորը, ինչ որ համալսարանի ամբիոնից լուսմ է, տեսնում, որովհետեւ զրանք բոլորն էլ անքան մերժ կալւած են անմիջական գործի հետ, որ ուսանողի ամենահարուստ երևակալութիւնն անգամ եթէ չկատ սեփական փորձառութիւն

<sup>1)</sup> Պրիւատ դոցէնտ (մասնաւոր ուսուցչապետ) կոչում են Գերմանիական պրոֆեսորութեան թեկնածուները, որոնք դասախոսում են բարձրագովն դպրոցներում, բայց որոնց դասերը պարտադիր չեն և որոնք գեռ ևս ոռոգիկ չեն ստանում համալսարանից:

հրաժարւում է նրան մի դրական օգուտ տալուց, այնուհետև ապագիսի ուսանողը գիմում է դասագրքերին, մտածելով զրանց միջոցով գոնէ իւր ծանօթութիւնները լանացնել իւր գիտութիան պակասը լրացնել, Սական գրքերը նրան քիչ ծառալութիւն կարող են մատուցանել, մինչև որ նա ինքը անձամբ գործի հետ ծանօթ չէ, որով բոլոս և կենդանի, հող և ջուր, դաշտ և մնաքենակ, դրանց հետ վարելու ձեերն ու եղանակները և ալլն և ալլն նրա համար որպէս վերացական գաղափարներ են մնում: Կրոպական նորագոյն գիւղասնահսութեան հետ անձանօթ օտար երկրացի ուսանողը իւր գործնական և տեսական ծանօթութիւնների ունեցած պաշարի թուլութիւնը զգում էմանաւանդ ուսումնական նպատակով ձեռնարկած ճանապարհորդութիւնների զրուանքների (Excursion) ժամանակ:

Այսամդ աւելուրդ չեմ համարում Նըրոպարում ընդունւած ուսումնական նպատակներով կատարող ալս զրօսանքների մասին ի միջի ալլոց մի քանի խօսք ասել: Զրօսանքները գերմանական մանկավարժութեան ամենազօրեղ ուսուցանողական միջոցներից ամենազլխատրն է: Մանաւանդ դիտողական առարկաների և գիտութիւնների վերաբերմամբ՝ ընդհանուր են բոլոր կարգի ուսումնարանների աշակերտները. զրօսանքներ են անում քաղաքալին միջնակարգ զպրոցների սաները, որպէս նաև բարձրագույն դպրոցների, համալսարանների չափահաս ուսունողները: Զրօսանքները մի նպատակ ունին՝ առարկան իւր տեղումը ծանօթացնել աշակերտին, որով և նա աւելի ամուր է մնում աշակերտի լիշտութեան մէջ: այս զրօսանքները լինում են, ինչ կառկած, ուսուցիչների կամ ուսուցչապեանների առաջնորդութեամբ: Ստորակարգ և միջնակարգ ուսումնարածներում արշաւանքներին մասնակցելը պարտաւորեցուցիչ է, ան ինչ սւանողների համար կամաւոր, սական, չնակելով ալս վերջին հանգամանքին, ոչ մի դասախոսութիւն անքան լաճախորդներ չէ ունենում որքան ալսպիսի զրօսանքները՝ մասնակցողների: Մի անգամ մի պրոֆեսոր ասաց, երանի թէ իմ լսարանը ալս աղատ բնութիւնը լինէր, ես հաւատացած եմ, որ վարձատրութիւնս եռապատիկ կը բարձրանալու: Աշխարհահագրութեան ուսուցիչը բնութեան մէջն է ցոլց տալիս արեի ծագումը ու մալր մտնելը, հորիզոնն ու երկրագնդի կոլորութիւնը և ալլն և ալլն. բնագիտութիւնը – բոլսերի բազմութիւնը, տերենների, ծաղիկների, արմատների տեսակները, հողի, քարերի, զեռունների, անասունների տեսակները և ալլն և ալլն լնութեան մէջ աւելի շօշափելի են խօսում քան դասարանում քարտէզի, նկարների, պատկերների, միջոցով: Բայց ոչ մի գիտութեան ուսանողների համար զրօսանքները անքան շահաւէտ և ուսանելի կարող չեն լինել որքան գիւղատնեսութիւնն ստվորովի համար, որի ապագալ գործունէութիւնն հիմնաքարը, – բնութիւնն է, հողն ու դաշտը, արտն և իւր բուսականութիւնը, ջուրը, լուսը, տաքութիւնը և

ալն և ալն, մի խօսքով բնութիւնը և նորա ովմերը, որից, իւր կեանքի նիւթական ապահովութեան համար, ամեն կերպ օգտում է մարդս. իսկ աղջ օգտելու տեսակները և միջոցները մեծ մասամբ նոյնպէս ազատ բնութեան մէջն են. Սական չպէտք է մոռանալ, որ արգիսի զրօսանքներ միան ախ ժամանակ իրանց խսկական օգուտները կը տան, երբ ուսանողը ծանօթ է իւր տեսածի գնէ է չական մասերի հետ. հակառակ դէպօփում, առարկան կորցնում է իւր հետաքրքրութիւնը, որով և ուսանողը զրկում տուանալիք օգուտներից. Ալսպիսի զրօսանքների ժամանակ (Ausflug) դիւզանտեսը ծանօթանում է նախ զանազան հողերի տեսակների, նրանց բուսականութեան և դրանց տեսակների աճման և զարգացման հետ, պտղափոխութեան տարբեր սիստէմների, գիւղանտեսական տեսակ տեսակ մեջնաների հետ՝ գործելու, բանելու ժամանակ, պարարտացնելու նիւթի և ձեւերի հետ, որպէս նաև գիւղանտեսական անասունների ցեղերի և նրանց արդիւնաբերութեան և դրա տեսեասութեան հետ.

Շատ պարզ է, որ սովորանման զրօսանքներից տեղական գիւղանտեսութեան հետ ծանօթ ուսանողը անհամեմատ ամելի շատ օգուտներ է ստանում, քան օտար երկրներից եկած ուսանողը.

Եւ ալսպէս երկու երեք տարի բարձրագոյն գիւղանտեսական դպրոցում մնալով, տեսական գիտութիւնները տեսականորէն, գործնականները դարձեալ տեսականորէն ստվորելուց, կարգալուց հետո, հայ ուսանողը մնա դրած իւր ձեռք բերած գիտութիւնների պաշարի վրայ, հայրենիք է վերադառնում, մի հաղար ու մի տեսակ հակակական ծրագիրներով և անմիջապէս գործ մկնում, և ինչպէս նա նախ անհրաժեշտ է համարում բերել տալու իր դասագրքերի մէջ վիճած բոլոր մեջնաները, առանց մատեծելու որքան չարմարն գործադրելի կարող են նրանք լինել մեր հողի, մեր տեղական պայմանների համար. նա անպայման հաւատ է բնծառում այն բոլորին ինչ որ դրքերում զրւած է. Եւ ահա մի քանի ամսից լիսառ ահազին ծախսերով արտասահմանից նա բերել է տալիս ամեն տեսակ մեջնաներ. ալսող կան ամերիկական երկաթի գութաններ, էքստիրպատորներ, ցէնտրիֆուգներ, ծեծելու, հնձելու, խուրճ կապելու, չողեշարժ մեջնաներ, մաքրելու, տեսակների բաժանելու, ծղողը մանրացնող և ալն և ալն մեջնաներ, որպէս նաև խլանդական, օստֆրիզեան կովեր, եզներ, անգլիական ձիեր<sup>1)</sup> և ալն և ալն, մի խօսքով ախ բոլորը, ինչ որ նա տեսել է և լսել. ալժմ հարկաւորէ անձամբ դործ ունենալ դրանց հետ,

1) Անասունների ցեղերը ազնւացնելու համար չենք կարծում որ մինչ ալժմ աղջքան ոգուրութիւն եղած լինի ուսում առած գիւղանտեսների մէջ.

որպիշեան տեղացի մշակները ոչինչ չեն հասկանում դրանց վիճածքից, Աւմմ զալիս է նրա գործունէութեան ամենավճռական բոպէն. նա ինքը դրանց հետ երբէք գործ չէ ունեցել, ինքը նոյն իսկ անծանօթ է դրանց կազմութեանը, ալտան նա առաջին անգամ շօշափելի կերպով տեսնում և զգում է իր ունեցած դիտութեան պակասութիւնները, իր գործնական խելքի և ծանօթութիւնների թերութիւնները։ Հասարակութիւնը, ծանօթները, բոլորը աչք անկած սպասում են, որ տեսնեն թէ ինչ դուրս կըդաւ այս բոլոր ձեռնարկութիւններից, դրանք բոլորն էլ կասկածում են դրանց քաջողութեան մէջ, և տեսնելով դիտանական գիւղատնտեսի անշաջողութիւնները, կամակ ակամակ սկսում են ծիծաղել նրա վրայ իսկ մեր գիւղատնտեսը իր առաջին փորձերի անշաջողութիւններից վետով լուսահատում է, թուլանում, նա կորցնում է եռանդը գործը շարունակելու, առաջ տանելու, և մի երկու տարուց թողնում է գիւղը և կալածը, զաշտ ու մեքենան, եղն ու կովը. թողնում է ամեն ինչ քաղաք գալիս և իր համար մի ոսկիշ շահաւետ պարագմունք վնասում, գուցէ և զատաստանատներում դրագրութիւն. իսկ տեսնողին և հարցնողին ասում է, թէ մեր երկիրը դեռ ևս անընդունակ է գիւղական տնտեսութեան, մեր ժողովուրդը դեռ ևս անընդունակ է գիւղական գիւղատնտեսին գնահատելու և այն և ալն. Սորանով էլ վերջանում է ամեն ինչ և իսկ հետեանքը. նախ նա ինքը դրամական ահազին վեասներ է ունենում իր ձեռնարկութիւններից, պարտքի մէջ է խրում և երկրորդ—ամենաագլխաւոր վեասը—հասարակութեան հաւաաը թուլացնում դէպի գիւղատնտեսական գիւղութիւնները, որով և ծիծաղելի զարձնում մի ուրիշն, որը նոյն գիւղատնտեսմբ պարագանէ յանկանում։

Ո՞վ է սորանում մեղաւոր, գիւղատնտես ուսանողը, հանգամանքները, մեր երկրի անշաջող պարաները, ինչպէս կարելի է գործը լաջողութեամբ տանել, երբ մենք մեր երկրում գիւղատնտեսական ոչ միջնակարգ և ոչ էլ բարձրագուն դպրոցներ ունենք, ոչ վարձնական զաշտեր, իջեաններ և ոչ էլ օրինակելի տնտեսութիւններ և կալածներ, կասեն մեզ ընթերցողները, սական իմ կարծիքով կարելի է, թէն մեծ գժւարութեամբ, ալդ բոլորը չունենալ բալց և ալճպէս դործը աւելի աջող տանել քան ալդ լինում է մեղանում, և առա թէ ինչպէտ։

Նախ շատ ցանկալի է, որ մեղնում գիւղատնտեսական բարձրագուն ուսում ստանան մեծ մասամբ հարուստ կալածատէրերի որպիք, որոնք ունին նախ սեփական հող, իրանց ապագակ ձեռնարկութիւնների պահանջնելիք դրամագլուխ և երբորդ՝ ունին միջոց և ժամանակ բարձրագուն գիւղատնտեսական ուսում ստանալու համար երկար տարիներ արտասահմանում մնալ և ալճակ օգտամակ ալն բոլոր լարմարութիւններից, որ ներկայացնում է ներոպան իւր բազմակողմանի հաստատութիւններով, Յանկալի է նաև, որ

արդպիսի երիտասարդները միջնակարգ ուսում ստացած լինեն ոչ թէ կլասիկական գեմնազներում, այլ բէալական և մեր թեմական դպրոցներում, ուր աշակերտը համեմատաբար աւելի շատ միջոցներ ունի գիւղարքներութեան հիմնական գիտութիւններով—ան է բնական գիտութիւններով—պարապելու. ապա անհրաժեշտ է որ նա միջնակարգ ուսումը աւարտելուց իտու (այս անպատճառ աւարտելուց և ոչ թերի թողնելուց իտու) ոչ թէ ուղղակի գիւղատնտեսական բարձրագույն դպրոց չտապի, այլ գեղաս 1—2 տարի իր կալածը գնալ և անձամբ անմիջապէս գիւղատնտեսութեամբ զրադշի. ալսինքն ծանօթանակ իր հալունի տնտեսութեան եղանակների հետ, վարժի չարքաշութեան մէջ, դիտէ ամեն ինչ իր շուրջը, երկիրը նրա կլիմաչական աջող և անլաջող պամաները, հողը, նրա ֆիզիկական և քիմիական լատկութիւնները, բուսերը, քարերը, կենդանիները, վարժի տեղական երկրագործական գործիքների գործադրութեան մէջ, ուսումնասիրի նրանց կազմութիւնը, շփու մշակների, բանտրների, գիւղացիների հետ—մի խօսքով ան հասարակութեան հետ, որոնք պէտք է կազմեն ան մթնոլորդը, ուր նա ապագալում գործելու է, Այս երկու տարւաչ ընթացքում նա պէտք է իր ուսումնասիրութեանց համար օգնութեան կանչի դպրոցում սովորած գիտութիւնները՝ բուսաբանութիւն, կենդանաբանութիւն, ֆիզիքա, քիմիա և ալին. հետաքրքրուի դրանցով և իր հարցարկութեանը կարելին չափ բաւականութիւն տալի զիտէ բնութիւնը և զարգացնի աղղիսով իր մէջ իրախուզութեան ոգին, իսկ այս վերջինս ամենանհրաժեշտ լատկութիւն պիտի լինի մի բնագէտի և գիւղատնտեսի համար. Այդ երկու տարիներում ձմեռները, երբ նա աւելի ազատ ժամանակ ունի, պէտք է պարապի ան երկրի լեզուի, ուր նա մտածում է զնալ բարձրագուն կրթութիւն ստանալու, որպէս զի նա անտեղ շատ ժամանակ չկորցնի լեզու սովորելու համար. և ապա այս բոլոր ծանօթութիւններով և նախապատրաստութիւններով ուղևորի արտասահման՝ գիւղատնտեսական մի որ և է բարձրագուն դպրոցում ուսանելու

---

Գիւղատնտեսական բարձրագուն դպրոցները արտասահմանում, մանաւանդ Գերմանիալում, երկու տեսակ են. ա) առանձնացած գիւղատնտեսական դպրոցներ կամ ճնմարաններ (isolierte landwirtschaftliche Anstalten կամ Akademien) և բ) համալսարանների հետ միացած գիւղատնտեսական ինստիտուտներ, Առաջինները համալսարաններից անկախ բարձրագուն դպրոցներ են իրանց ուսուցչապետներով և վերատեսուչներով. դրանք լինում են մեծ մասամբ մեծ քաղաքներից դուրս, մի կալածում, և որոշւած են ապագակ մեծ կալածատէրեր, կալածների կապալառուներ (Pächter), տնտեսութեան պաշտոնեաներ, պետական պաշտոնեաներ պատ-

րասանելու համար, որոնցից պահանջվում է հիմնաւոր ծանօթուն գիւղատընտեսութեան համար Ակսպիսի հաստատութիւնները զիւղատընտեսութեան զիւնական կենդրուններն են, ուստի և ուսանողներից պահանջվում են միջնակարգ ուսանան հիմնաւոր պաշար և գիւղատնտեսական գործնական ծանօթութիւններ, Յւ եթէ ուսանողը ակսպիսի նախապատրաստութեամբ մտնում է նոյնանման ուսումնարաններ, նրան 4—5 մետրու ուսման ընթացքը աւարտելու համար բալորովին բաւական են, ի հարկէ այն դէպքում՝ երբ ուսանողը լընութեամբ պարապում է գիտութիւններով, Ակսպիսի առանձնացած զպրոցների համար անպայման միացած է մի կալւած, որը և ծառապում է ուսումնական նպատակներին, որովհետեւ դրանց վրա են փորձնական դաշտերը — զիւնական հետազոտութեանց և փորձերի համար, փորձնական պարագներ, բուսաբանութեան ազգի, գիւղատնտեսական անասնաշնորհ (Rossstall), փորձնական լընաններ (Vezsuehsstation), բացի այդ, ազգափիսի դպրոցները անպատճառ ունենում են զանազան զիւնական թանգարաններ, ինչպէս օրինակ, բուսաբանական, կենդանաբանական, երկրաբանական, Փիզիքական մօտէների, գիւղատնտեսական մեքենաների և գործիքների, սերմերի, բուրզի, միկրոսկոպների և ալճ, որպէս նաև քիմիական լաբարատորիա, հարուստ գրադարան, ջերմոցներ և ալճ և ալճն, Բարձրագուն առանձնացած զպրոցների հետ սովորաբար միացած են լինում նաև երկրագործական ստորակարգ ուսումնարաններ (Ackergauschule), որոնք միջոց են տալիս ուսանողներին ուսումնարանի աշակերտների գործնական պարապմունքները զիւնական զասատութեան եղանակի հետ ծանօթանալ և ալճ և ալճն, Ուսման ծրագիրը մօտաւորապէս հետեւեալն է, բնական զիտութիւններ՝ քիմիա, Փիզիոլոգիա և անատոմիա, Փիզիկա, Երկրաբանութիւն, բուսաբանութիւն և կենդանաբանութիւն իրա սառարաժանմունքներով. ապա անտառապահութիւն, քաղաքական տնտեսութիւն, գիւղատնտեսական իրաւագիտութիւն և պատութիւն գիւղատնտեսութիւն, մեքենալագիտութիւն, ազգաբանութիւն (Ethnographie) ստատիստիկա, ջրաբաշխութիւն, երկրաչափութիւն, ճարտարապետութիւն և հաշվագիտութիւն (գիւղատնտեսական), զուտ գիւղատնտեսական զիտութիւններ՝ հողագործութիւն, բուսական և անասնական արդիւնաբերութիւն (Pflanzen-und Viehzuchtlehre) և ուսումնա արդիւնաբերութեան (Betrlebtslehre). Բոլոր ուսանողները ապրում են ճեմարանապատկան շինութիւնների մէջ, ունին առանձին առանձին սենեհակներ, Որպէս զիտնական և ընկերական հաստատութիւններ, կան գիւղատնտեսական և քաղաքա-տնտեսական ընկերութիւններ և վարժոցներ ուսանողամիութիւններ (Verbindung) և զամբակական ժողովներ. դրանցից շատերին մասնակցում են ի՞ո՞անք ուսուցչապիտները օգնելով ուսանողներին խօսքով և գործով. ուսումնական ընկերութիւնների մէջ ուսանողների կող-

մից կարդացուում են դասախոսութիւններ, որոնք, ընդհանուր քննադատութեան ենթարկելուց իտու, տպագրուում են ուսանողական ալս կամ այն ամսագրի մէջ.

Բ. Երկրորդ տեսակի գիւղատնտեսական ինստիտուտներ՝ միացած համալսարանի հետո. Այս տեսակի ինստիտուտները անպալման քաղաքներում են և կազմում են համալսարանի ֆիլոսոփական ճիշդի մի բաժանութեամբ կը պահանջի առաջին տեսակի դպրոցների համամատութեամբ կը պահանջի են նրանում, որ նախ՝ ուսուցչական ոգերը, ընդհանուր առմամբ, աւելի նշանաւոր են լինում քան առաջիններում, որոնց համար, չնորհիւ դրանց քաղաքների քիչ թէ շատ հեռու լինելուն, դժւար է լինում աչքի ընկնող ուսուցչապետներ հրաւիրել. իսկ թէ պարզիսիններ հարում էլ են՝ միւս գիտնականներից, հարուստ գրադարաններից և ուրիշ կրթական հաստատութիւններից անջատած լինելու պատճառով դժւարանում են ժամանակակից գիտութեան բարձրութեան վրայ մըշտ մնալ. իսկ ինչ վերաբերում է ուսանողներին, որանք համալսարաններում լարմարութիւն ունին ոչ միան իրանց ընտրած մասնագիտութիւնների աէր կրթւած անձանց հետ շիմել, խօսալ, և, բացի ալդ, նաև իրանց հոգեկան և դեղարւեստական աշխարհը ազնւացնել՝ քաղաքակին թատրոններ, նւազանան դէսներ լաճախելով, ցուցահանդէսներ, նկարչական և քանդակագործական թանգարաններ ալցնելով և աշդպիսով քաղաքակիրթութեան լառաջադիմութեան անմիջական դիտողը տեսնողը և մասնակցողը լինել իսկ գալով միւս մատնագիտական թանգարաններին և հաստատութիւններին, ինչ կառկած որ ինստիտուտներ ունին, նորն չափով եթէ ոչ աւելի. սական համալսարանի գիւղատնտեսական ինստիտուտները ունին մի մեծ պակասութիւն—ալդ ան է, որ ուսանողները կարւած են լինում գիւղական գաշտակին աշխատանքների լաճախ գիտողութիւնից, իրանց ապագայ գործունէութեան անմիջական աղբիւրից, և թէն ձեռնարկուում են լաճախակի զրուանքներ, էքսկուրսիաններ զէպի զանազան կալածներ, սական զրանք չկարծեմ թէ ալդ պակասը բոլորավին ծածկել կարողանան.

---

Գալով ալն հարցին թէ հակ ուսանողը արտասահմաննան ալդ գիւղատնտեսական բարձրագուն դպրոցներից որը պէտք է վեր դասի, դա, իմ կարծիքով՝ գրեթէ մի և նոզն է, երկուսն էլ ունին իրանց բարձր արժանաւորութիւնները, առաւելութիւնները և լարմարութիւնները. երկուարի մէջ էլ գիտութիւնը խնամում է հաւասարագիս և

երկուաից որն էլ որ ընտրի ժրաջան, աշխատասէր ուսանողը, կարող է շատ բան անել: Սական, իմ կարծիքով աւելի լաւ կը լինի եթէ հայ դիւզամնատես ուսանողը իր ուսման ընթացքում ազդ երկու տեսակ դրագ լոցներում էլ լինի փոփոխապէս, ալսինքն նախ համալրաբանական քաղաք գնաւ անտեղ 2—3 սեմետր մնաէ և ապա շարունակի առանձնացած ճնմարաններում Ահա թէ ինչու

Մեր տղերքը, երբ հալրենիքից առաջին անգամ Եւրոպա են գալիս իսկոն աչքի են ընկնում մի տեսակ կոպտութեամբ ձեերի, խօսակցութեան, ճաշակի, մինչև անդամ ման գալու մէջ, մի խօսքով ան բոլոր բաներում, որ վերաբերում է քաղաքակրթութեան արտաքինին: Ազդակիս մի երիտասարդ, երբ իր լնտ ընկած քաղաքից ուղղակի ընկնում է եւրոպական քաղաքներից հեռու ընկած մի համեմատաբար փակւած ճնմարան, ուր նրա շրջանը միմիալ տղամարդիկ և ուսանողներ են կազմում, նա մի քանի ասրուց լնտով գրեթէ նորն է մնում ինչ որ էր հալրենիքից գարում՝ կոպիտ, անտաշ, անբարեկիրթ: ազն ինչ եւրոպական մի քաղաքում մնալով նա փոքր առ փոքր փոխում է, կրթում է, որովհետև նա ալսուել առիթ է ունենում շիւել զանազան դասակարգի և դիրքի մարդկանց հետ, կանանց և օրիորդների հասարակութեան մէջ է մնում և ալն, որոնց ներկալութիւնը ալսպէս թէ ալնպէս ատիպում է նրան իրեն ուրիշ կերպ պահնել, քան թէ նա իւր ընկեր ուսանողների մէջ է, իսկ արտաքին բարեկրթութիւնը ներկալ հասարակութեան մէջ նոյնքան անհրաժեշտ է, որքան և ներքինը, իսկ քաղաքը, ալդ բանում միշտ ունենում է իր աղղեցութիւնը, որով և իւր դեռը կատարում, Գալով բուն ուսմանը, համալրաններում բնական դիտութիւնները—դիւզատնանութեան ալդ հիմնացարերը—աւելի են խնամւած քան առանձնացած զպրացներում: Հարութատորիանները աւելի հարուստ են, ուսուցչապեանները աւելի խստապահնաջ քան առաջիններում, ուստի և շատ լաւ կը լինի եթէ ալդ տեսակէտից ևս ուսման սկզբում համալրաբանական ինստիտուաններին նախապատռութիւններով առաջապահ կը լինի, թող նա մտնի երկրորդ տեսակի զպրացները, ուր բուն դիւզատնանական դիտութիւնները աւելի խնամւում են, և երկրորդ՝ պատեղ ուսանողը ամենից աւելի միջոց և լարմարութիւն ունի իւր սովորածը և սովորկվեք միշտ բնութեան, զործադրութեան մէջ տեսնելու, դիտելու և համեմատելու, իսկ միւս կողմից՝ վերջին մեմնատրներում ուսանողը սովորաբար պատրաստում է լառաջիկալ քննութիւնների համար, նրա պարապմունքները բարդանում են և զմարանում, ժամանակի աւելի շատ պահանջ է զգացում, ուստի պատեղ ուսանողը աւելի շատ լարմարութիւններ ունի խաղաղ և հանգիստ պարապելու քան ազմկալից, գործից խլող զւարծութիւններով մի քաղաքի անմաքուր օդի մէջ,

Բալց եթէ մեր ուսանողը ցանկանում է ապագայում ոչ միայն խօսքի և ալ գործի մարդ դառնալ, անհրաժեշտ է, որ նա, առաջ քան բուն զիւղատնտեսական զիտութիւններին անցնելը, մի տարով ընդհատի իւր տեսական ուսամանընթացքը, մտնելով մի որ և է օրինակելի կալւած որպէս կամաւոր, (volontaire) և աշնտեղ մի հմտւա կալւածատիրոջ ձեռքի ղեկավարութեան տակ գործնականով պարապի. Ահա ապատեղ նա միջոց կունենալ ծանօթանալու ախ իսկական առաջադիմութեան հետ, որ արել է 19-րդ դարում զիւղատնտեսութիւնը. Նա ապատեղ կ'ուսումնասիրի տնտեսութեան զանազան եղանակները, կը հմտանալ երկիր մշակելու բոլոր զիտական ձևերի մէջ, զրա հետ բազմատեսակ անհրաժեշտ մեքենաների և գործիքների գործադրութեան մէջ, կը ծանօթանակ անսասունների և նրանց կերակրելու, պահելու, խնամելու արևեստի հետ Դաշտերի ընական և արևեստական պարարտացման միջոցների, կուլտուրական բոլսերի զարգացման պարմանները, պտղափոխութեան, դաշտակին անտեսութեան, կալւածի կառավարչական հոգսերի և դժւարութեանց հետ, մի խօսքով ախ բոլորի հետ, ինչ որ մի տարուց իսոտ նա պէտք է իւր ուսուցչապետից, որպէս զիտական մեթոսներ, ամբիոնից լսի, նրա քննադասութիւններին հետեւի, բացատրութիւններին մասնակցի. Ապատեղ ահա նա առիթ ունի իւր սովորած քնական զիտութիւնների օրէնքները, որոնց աղդեցութեան և հետևանքների ողջ պրոցէսը իրականութեան մէջ տեսնել, հետազոտել, ճշոել Եւ շատ լաւ կը լինի, թէ կամաւորը չբաւականանակ միմիան հանդիսատես լինելով ալ ինքը անձամբ մասնակցի դաշտակին բոլոր աշխատանքներին, արդիմատնատեսութեան բոլոր գործառնութիւններին. կալւածատէրը միշտ ուրախութեամբ է նալում կամաւորի ալսպիտի եռանդուն գործունէութեան վրա և ամնն քաղաքիտում շտապում է իւր կամաւորին որպէս գործով նորպէս և խօսքով օգնել, հետաքրքրութեանը բաւականութիւն տալ. Մի տարի ալսպիտ կալւածում անցնելը զիւղատնտես ուսանովին ալճքան օգուաններ կը տալ, որքան հազիւ լսարաններում անցրած մի քանի տարիները. և ապա թէ տնտեսական տարին բոլորելուց իսոտ նա կարող է նորից զիւղատնտեսական բարձրագոյն դպրոց գնալ շարունակելու ընդհատած ուսումը. ալսպեղ դասախոսութիւնների ժամանակ միայն նա կը հասկանակ կալւածում անցրած մի տարւաւ օգուանների տրժէքը. ալսունետեղ դասախոսութիւնները նրա համար կը ստանան մի առանձին հետաքրքրութիւն, մի առանձին գրաւչութիւն, նա ձեռք բերած կր լինի կրիտիկական հակեացք. և ախ բոլոր գրքերը իրանց բազմաթիւ նկարներով կը զադարեն ալ ևս վերացական զաղափարներ լինելուց, ալլ որպէս վերարտադրութեան միջոցներ իւր տեսածների ու կարդացածների, կը տան իրանց իսկական օգուանները. Անուհետեւ նա Փիլսոփալութեան զոկուրի քննութիւն կը տալ թէ ոչ, դա բոլորովին իր իմանալու և վճռելու հարցն է.

Եւ ալովէս չորս տարի արտասահմանում անցնելուց, եւրոպական նորագոյն գիւղատնտեսութիւնը տեսականապէս և գործնականապէս ուստամբասիրելուց լեռող, նա կարող է հանգիստ խղճով հայրենիք դառնալ, լի ապագաէ լաջողութեան հաւաստով. Հայրենիք գալուց նա պէտք է փախչի իսկոյն և եթ մեծ զործ սկսելուց, նա գեռ ևս պէտք է այն երկիրը, ժողովուրդը, նրա պավմանները ուստամբասիրելու գործին ինքն նորուի, ինքը անձամբ փորձեր անի և առաջ թէ իւր իսկական գործին և կոչմանը նւիրւի. Միան ալսպիսի զիտնական և փորձնական հմտութիւններից վետով նա կարող է որպէս իւր սեփական անձի նունապէս և հասրակութեանը օգտաւէտ լինելը և նրա մէջ հաւաստ և վստահութիւն հաստատել զէպի զիւղատնտեսական բարձրագոյն կրթութիւնը մասնաւորապէս և դէպի նրա փրկարար նշանակութիւնը՝ ընդհանրապէս.